բձ 23 Հինգշաբաթ, Գաւթի մարգարէին եւ Յակովբայ առաքելոյն:

գկ 26 Հինգերորդ կիրակէէն, Տրց. գկ. Կախալախտեան. Տմբ. գկ. Առեալ եւ մերցվերջն:

աձ 29 Երեքշաբաթ, Տրց. գկ. Աստուած հարցն մերոց ուղորմեալ: Բարեկենդան ծննդեան պահոցն:

գձ 2 Վեցերորդ կիրակէէն, պահոց Տմբ. գձ. Փառաւորեալ է քո յա՛. ցվերջն:

գկ 3 Երկուշաբաթ պահոց, Տրց. գկ. Հարցն մերոց օրհնեալ ես Տէր:

գկ 5 Չորեքշաբաթ, ձրագալոյց ծննդեանն Քրիստոսի:

Ք.
Եօթներեակ հոսանցեցոց 4:

բկ 6 Երեքշաբաթ, տօն ծննդեանն եւ Յայտնութեան Քրիստոսի: Միջոց ուտիքն քառասունն եւ մէկ օր է:

բկ 14 Միւս երեքշաբաթ, պահք. Տրց. ազց՝ աձ. Երգէին մանկուծքն:

գձ 15 Հինգշաբաթ, Յովհաննու կարապետին:

գձ 17 Շաբաթ, Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին եւ Աբիսողոմայ սարկաւազին:

գկ 18 Առաջին կիրակէէն, Տմբ. գկ. Փառք յարութեան. ցվերջն:

աձ 19 Երկուշաբաթ, սրբոցն Անտօնի ճգնաւորին:

ակ 20 Երեքշաբաթ, Թէոփոսի թագաւորին եւ Մանկանցն եպիսկոպոսի:

բձ 21 Չորեքշաբաթ, Տրց. ակ. ազց՝ Փառաւորեալ յաւիտեանն:

բկ 22 Հինգշաբաթ, կիրակոսի եւ Յօղիտայի եւ Գորգիոսի, Պօղիբոսի եւ Գրիգորի. Տրց. աձ. Ըղբեղ արգար:

գկ 24 Շաբաթ, սրբոց հայրապետացն, Աթանասի եւ կիրիլի եւ Գրիգորի աստուածաբանին:

գձ 25 Երկրորդ կիրակէէն, Տրց. բկ. Կամաւորութեամբ եկիր. Տմբ. գձ. Չարութիւն աստուածորդոցն:

գկ 26 Երկուշաբաթ, Վահանայ գողթնացոցն, Եւզիմեայ կուսին եւ հօրն նորա Փիլիպոսի եւ այլն. Տրց. ակ. Սուրբ Աստուած արարիչ:

աձ 27 Երեքշաբաթ, Տրիփոնի, Պարսամայ եւ Ոնոփրիոսի ճգնաւորացն:

ակ 28 Չորեքշաբաթ, Տրց. ազց՝ բձ. Ար ապրեցուցեր:

բձ 29 Հինգշաբաթ, Եւզիմեոսի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կանգիտոսի եւ Ակիւղասայ. Տրց. ակ. Ար բարձրեալդ ես:

գձ 31 Շաբաթ, սրբոցն Թագէտի առաքելոյն եւ Վանգիտայ կուսին: (Ի Թագէտոս աստուծոցս ակեալ զ'ի յերայ երեւալս յառաջին հարստն զին Վարդապետին արեւ: Բայց զհարցան եւ զիայնն աստուծոցն:)

գկ 1 Երրորդ կիրակէէն. Տրց. գձ. Արարիչ արարածոց. Տմբ. գկ. Տեսիլ փայլակեան:

գձ 2 Երկուշաբաթ, կիրիլիանոսի եպիսկոպոսին եւ խե. Վկայիցն եւ սրբոց կուսանացն Յուստիանայ, Եւփիմեայ եւ Քրիստինեայ. Տրց. բձ. Անտիակալ:

գկ 3 Երեքշաբաթ, Աթանագինեայ եպիսկոպոսին եւ տանն աշակերտացն եւ հինգ Վկայիցն. Տրց. բձ. Ընդ սուրբս քո:

ակ 5 Հինգշաբաթ, սրբոց Կախալախտեան, Աբելի եւ այլն:

բկ 7 Շաբաթ, Արգուց եւ Թուանց սրբոցն Գրիգորի լուսաւորին մերոց. Արիստակիսի եւ այլն:

գձ 8 Չորրորդ կիրակէէն, Տրց. գկ. Այսօր զեւնաւ. Տմբ. գձ. Ի ձայն ահեղ:

գկ 9 Երկուշաբաթ, Մակարայեցոցն, Եղիազարու քահանային եւ Շամունեայ եւ Եօթն օրդոցն. Տրց. բկ. Օրհնեմք զըեղ Տէր:

գձ 10 Երեքշաբաթ, Երկոտասան մարգարէիցն:

գկ 11 Չորեքշաբաթ, Տրց. ազց՝ բկ. Հարցն մերոց օրհնեալ ես Տէր:

աձ 12 Հինգշաբաթ, սրբոցն Մոփիայ եւ երկց գոսերացն՝ Պիստոսի, Եւկիսի եւ Ագապի. Տրց. բկ. Արք ի մարտի:

բձ 14 Շաբաթ, Տեառնդաւալ է:


բկ 15 Հինգերորդ կիրակէէն, Տմբ. բկ. Չարութիւն Քրիստոսի: Բարեկենդան առաջաւորի պահոցն:

գձ 16 Երկուշաբաթ, պահք առաջաւորին. Տրց. ազց՝ բկ. Տէր Աստուած հարցն մերոց:

բձ 22 Կիրակէէն, Տմբ. բձ. Աբանչելի կանայքն:

ակ 29 Միջին կիրակէէն, Տրց. գկ. Ար յահեղալիբալ. Տմբ. ակ. Երգեցուք ըեղ ընդ հրեշտակս:

գկ 17 Բուն բարեկենդանի կիրակէէն: (Տէր եւ զայլնն ի (Փ). զէ Ք էն թշտ Կահանգ լինէ եւ թնգեալ ի մարտն Բանի:)



Խրատը լուսն Գարթաձառնեան հարմարեալ ձևի շրջանից:

Առաջիկայ շրջանի մշտնջենաւոր մեծ շրջանն մի է պարունակող 532 ամաց: որ ի ձեռն ամի Տեառն կամ թուականի Հայոց անսխալ ցուցանէ գտարեգիրն և գեթնեքեակն և զվերագիրն հասկանցեաց: զի ի լրանայ 532 ամացն: դարձեալ սկսանի ի սկզբէն՝ փոխելով միայն զթուականն: Աւր ի սկզբան առաջին կարգին եղեալ է ամ Տեառն և յերկրորդի կարգին թուականն Հայոց: Եւ ի գլուխ աղիւսակին եղեալ երկամպիրքն են վերագիրք շրջանանցեաց: և ի միջի եղեալ նոր գիրքն են եօնեքեակք: և ի ներքոյ նոցին բարբաղիրքն տարեգիրք:

Արդ տես՝ զի սկսանի աղիւսակ ի 1891 ամէ Տեառն և այն թուականն Հայոց որք կան ի սկզբան աղիւսակին: Աստի յայտոյիկ թուոց կալեալ՝ մինչ ուղղակի մտանես ի հանգիստակաց յառաջին տուփն գտանես գտարեգիրն նոյն տարւոյն (ա): և անդ ի վերայ նորա եղեալ գեթնեքեակն նոյն տարւոյն (բ): և ի գլուխ նոցին եղեալ զվերագիրն նոյն տարւոյն (1):

Եւ այց մինչ հասանիս ի 1892 ամ Տեառն կամ ի այլա թուականն Հայոց (որք գործ թեամբ կարգի հաշուի դին), մտա յերկրորդ տուփն առաջին տուփն: յորում գտանես գտարեգիրն նոյն տարւոյն (հ): և անդ ի վերայ նորա գեթնեքեակն (գ): և ի գլուխ նոցին զվերագիրն (ձ): Եւ այսու կարգաւ սրբան ամի թուականն: այնքան թուով երթ յառաջ ի նոյն տուփն: ուր գտանես գտարեգիր տարւոյն: ընդ նմին և գեթնեքեակ և ի վեր անդ ուղղակի զվերագիրն ըստ իւրաքանչիւր ամաց:

Եւ մինչ այսպէս հասանիս ի վերջին տուփն առաջին տուփն: յորում ամ Տեառն լինի 190: և թուականն Հայոց ոչ ըստ անդ գտանես գտարեգիրն նոյն ամին (ը): և ի վերայ նորա գեթնեքեակն (յ): և ի գլուխ նոցին զվերագիրն (ժ): Ապա ի վերջնամայ նոյն ամին վերջնամայ և առաջին տուփն ի 19 տարին:

Յայնժամ պարտ ո գտանալի սկիզբն երկրորդ տուփն: յորում գտանես զամ Տեառն 1910: և զթուականն Հայոց ոչ ըստ: և ի հանդիպակաց յառաջին տուփն գտարեգիրն նոյն ամին (ռ): և ի վերայ նորա գեթնեքեակն (է): և ի վեր անդ ուղղակի զվերագիրն (1): Եւ զնոյն իրաւան առաջնոց տուփն պահես և յայտում երկրորդ և յերկրորդ և ի յորտորդ և յայտում նոյն տուփն մինչև ի վերջն:

Եւ այսպէս յորժամ հասանես ի վերջին տուփն: յորում է ամ Տեառն 2422: և թուականն Հայոց ուղղակի և ի նոցին վերջին տուփն ուր է տարեգիրն (ի): և ի վերայ նորա եթնեքեակն (ա): և ի վեր անդ ուղղակի վերագիրն (ժ): յորում ամն Տեառն լինի 2422: և թուականն Հայոց ուղղակի: յայնժամ լրանայ մեծ շրջանն հինգ հարիւրեկին: այսինքն՝ 532 ամացն: Զի առաջիկայ աղիւսակ ունի 28 տղաւ: և իւրաքանչիւր տող տեւ մինչև ի 19 տարի՝ ըստ թուոց 19 վերագրացն հասկանցեաց: Եւ 19 անգամ՝ 28: կամ 28 անգամ՝ 19: է 532: որ է մեծ շրջան մի:

Այսն այսորիկ ի լրանալ մից մեծի շրջանի հարիւրաւորի նորոգ գտանալ ի նոյն առաջին սկզբան տուփն և սկսանիլ վերստին: յորում ամ Տեառն լինի 2423: և թուականն Հայոց ուղղակի և ի հանդիպակաց յառաջին տուփն եղեալ տարեգիրն (ա): և ի վերայ նորա եթնեքեակն (բ): և ի գլուխ աղիւսակին վերագիրն (1): ըստ առաջին կարգին: զի միայն զթուականն պարտիս փոխել: և նման առաջնոյն կարգաւ ընթանալ:

Զայս մշտնջենաւոր մեծ շրջան յայն սակս եղաք աստանոր: զի առ ձեռն ունելով զթուականն տարւոյն նոյաւ գտանիցես զգիր տարւոյն: և ապա յերկրորդ հատորի տօնացուցիս գտեալ զխորան նոյն գրոյն՝ վարեցիս անսխալ և անվրէպ ըստ ցուցման նորին:

Եւ թէպէտ եթնեքեակն ոչ էին յոյժ հարկաւոր աստ: բայց եղաք վստն յարմար բերելոյ զշրջանն:

Table with columns for years (1891-2404) and corresponding Armenian characters. The title above the table is 'Վերստին: Երկուսի: զիր տարւոյ'.

վերջապահանքն ընդ ծննդոցն և լինելու կտակ արարելու ասին աս յերազմեայս:

Արդ՝ վերջապէս զայսքանս իբրու կտակ և հարկաւորապէս պատուէր տւանդեմ՝ օրհնեալ և հարազատ ազգիդ իմոյ՝ զի որովհետեւ իբր դէպ կացուցայ ձեզ յԱստուծոյ՝ հարկ գոյ ի վերայ իմ՝ ի զգուշացուցանել զձեզ յամենից վնասակարաց և ազատել ի պարտուց՝ ըստ անտուա բանին նոյնոյ Աստուծոյ՝ որ առ Նդեկիէլ: Արդ՝ սիրելիք մեր՝ գիտէք իսկ ամենեքեան՝ զի հեշտասէրք և անտաւորք ոմանք՝ որք գոյով ի բնէ՝ յազգէս և յեկեղեցոյս մերմէ՝ ոչ այսով իւրք դիմաւ մը՝ եթէ ոչ միայն վասն մարմնականի հեշտութեան և անտանձ որկրամուրթեան իւրեանց ուրացեալք զեկեղեցիս և զազգս մեր՝ յորս ծնեալք և սնեալք են՝ յարին յայլ ազգս քրիստոնէից՝ որք պերճք են թագաւորութեամբ և հարստութեամբ և ազատք ի մարմնական պակասութեանց՝ և յայլազգական բռնութեանց: Արդ այսպիսիք որք հարկեցեալք ի մարմնական նեղութեանց և պակասութեանց՝ թողեալք զիւրեանցսն՝ յարին առ այլ ազգս՝ զի ի հեշտութեան մնացնեն՝ զկոկորդս և զցանկութիւնս մարմնոց իւրեանց որոց իսպառ ծառայք են լեալք՝ փոքուք իրօք ոչ կարեն լցուցանել և առ այնս ազգս յորս զիմեալք են՝ իբրև զգաբաւոնացիս փայտակոտորք և ջրակիրք են համարեցեալք և յայս որոց միշտ արհամարհեցեալք իբրև ոչինչ են առաջի նոցա՝ և զոչինչ կարեն առնուլ ի նոցանէ: Իսկ և ի մէնջ ի բնական յազգէս իւրեանց ևս զոչինչ կարեն խնդրել որ և իցէ պատճառօք՝ զի ուրացուք են հայրենաւանդ ուխտին և եկեղեցոյն իւրեանց: Աստուծոյն այսորիկ՝ և հարկաւորին ի գտանել ըստ Գաբաւոնացոցն զզանազանակերպ հնարս խաբէութեան՝ զի ըստ կարծեաց իւրեանց խաբեսցեն զնոսա և զմեզ՝ զի ապրեացին: Եւ մինչ այսպիսիքս ունին միշտ ի յունկս իւրեանց զհնազոյն հեղինակն և ուսուցիչն լաւապէս կեցութեան՝ ուսան ի նմանէ զպէսպէս արհեստս խաբէութեան՝ այսինքն՝ զկեղծաւորեալ

բժշկականութիւնս մարմնաւոր՝ զմուր և զթիւր վարդապետութիւնս հոգեւոր՝ և զայլս այսպիսի: Արդք սկսան շրջիլ և յաճիլ յերկրէ յերկիր՝ և մտանել տանէ ի տունս և գերել զթուլամորթ անձինս զիւրապիսիս՝ զշեղջակուտեալս մեղօք՝ և զվարեալս ի պէսպէս ցանկութիւնս: Արդ ըստ անտաւորեացն նախապէս ի պատճառս բժշկութեան մարմնոյն՝ զպահան ուսեցուցանեն. և ապա զհոգին ի ճշմարիտ հաւատոյն մտորեցուցանեն պէսպէս զիւրաշունչ վարդապետութեամբ. և ապա իբր մեծ բարերար նոցա ձեւանալով՝ զարիւնս նոցա ծծեն աղբիւրս և յորանան: Բայց այսպիսիք հնարիւք թէպէտ ծծեցին և ծծեն զարիւնս ոմանց թուլամորթացն մերոց խաբէութեամբ՝ որպէս ասացաք. սակայն այնց կողմնացուցն ոչինչ հաճոյացան և ոչ խաբել կարացին: Ապա թելադրութեամբ նոյն հնազոյն հեղինակին իւրեանց՝ գաին զայլ իմն զօրեղագոյն արհեստ խաբէութեան՝ որով իբրու ըստ կարծեաց իւրեանց կարիցեն խաբել զերկուս կողմնս ևս՝ այսինքն է՝ զտապագրութիւնս՝ որ ոչ եթէ ճըմարտատապութիւնս՝ այլ ստատապութիւն և ազաւազող ճշմարտութեան: Քանզի որովհետեւ ամօթն յերեսացն բարձեալ՝ և երկիւզն ի ուրբտինցն՝ գողանան աստի և անտի ի մէնջ և ի նոցունց զգրեանս հնազոյնից սրբոց վարդապետաց և ապականեալ այլայլեն զմիտս հեղինակացն և ըստ անտաւորեաց իւրեանց զինչ և որպէս կամին՝ գրեն՝ տպեն՝ և սիւսեն յազգս մեր՝ զնոսա խաբելով թէ՝ զձերն տպելով արկանեմք յազգն Հայոց՝ զի նորօք դարձուցուք զնոսա առ ձեզ և զազգս Հայոց խաբեն թէ վասն ձեր յաւիմք՝ և աշխատիմք վասն օգտի ձերոյ՝ զի ուսանիցիք: Բայց ինքեանք ոչ զնոցա հաւատ և զիրօնն արհեսն և ոչ զմերն սպա յիրուի ասացաք սուտք են և ստեն առ նոսա և առ մեզ: Այլ այս ի միայն գիտումն նոցա ճշմարտապէս՝ զի այսպիսեօք խաբէական հրնարիւք զարիւնս միամտացն ազգիս Հայոց ծծիցին՝ և զգտտերս տղրկին յազգեցուցանիցեն՝ որպէս և առնեն իսկ: Ահ՝ զի ոչ ասեմք. քանզի երկիրն յամենայնի բարեղի՝ ամենայն իւրեթք՝ գործիք և արհեստաւորք առատք և

առ ձեռն պատրաստք և զիւրագինք. իշխանութիւնն քրիստոնէից. ինքեանք ազատք յամենայնի և անվիշտք յայլազգական բռնութեանց և պահանջմանց և գործն թարց արգելաութից և յաջող ըստ ամենայնի: Արեն զթուլթոս, ընուն ծաղրաբանութեամբ և շատախօսութեամբ. զարգարեն արտարուստ որպէս և կամին. ընուն զնաւս և սուտքեն այսք և անդր որպէս զմի հազուագիւտ և զարմացուցիչ նոր իմն և ծախեն չորիցս և հնգիցս գնով: Երաւիտ և օրհնեալ ազգն մեր ևս՝ տեսեալ զվերերեւոյթ գեղեցկութիւնն, կարծէ թէ՝ լի է անձանօթ գիտութեամբ, իսկ ի մէջ նոցա եթէ ի հարիւրից և ի հազարաց մին գրասանիցի պիտանի և ընդունելի, զայն ի մէնջ՝ և ի գրեանց մերոց են գողացեալ. իսկ զայլն զորս իբրու ինքեանք են յարմարեալ բախանգակին են առատախօսութիւնք և աւելորդաբանութիւնք՝ որպէս յայսին է գիտնոց: Իսկ և ասացի թէ՝ աղաւաղեն և այլայլեն զբանս հնոց սրբոց հեղինակաց, զմին տամ ձեզ օրինակ, սովաւ և զայլն գիտաջիբք: Արբայն Ներսիսի շնորհաւոյն գրեամբքն լի է ազգս մեր թէ գրչագրօք՝ և թէ տպեցելովք՝ ոչ ուրեք գոն ասացեալք ի նմանէ վասն Հոգւոյն սրբոյ ի Հօրէ և յԱրդւոյ բղիտեալ: Ահա անամօթքն այնք՝ ի ժամագրքոյն զոր ինքեանք տպեալ են ի մէջ Առաւօտ լուսոյն՝ և յերգս Արեւագալին զնեն թէ՝ բղիտումն ի Հօրէ և յԱրդւոյ և թէ՝ ի Հօրէ և յԱրդւոյ բղիտեալ հոգի՝ որք ոչ ըստ չափաւորութեան ոտիցն յարմարին և ոչ ըստ մտաց հեղինակին: Արդ՝ զայստիկ զորս ամենայն քր զիտէ՝ թէ կարգաւոր և թէ աշխարհական. և գրեանքն յամենայն տեղիս գտանին. եթէ չամային ի թուրեւորեն և յայլայլեն, ապա զայնս գրեանսն որք չեն տպեցեալք և հազուագիւտք են ի յազգս մեր, արգեօք սրբան այլայլեն և թուրեւորեն. մտածելի է: Այսպէս աշխատին վասն օգտին ազգիս Հայոց՝ և ցաւին վասն մեր խաբեսցան այնօրիկ: Արդ՝ ասեմք սիրելեացք իմոց օրհնեալ ազգիդ Հայոց և իբրև զկտակ յաւիտեանական աւանդեմ՝ ձեզ ամենեցունցդ՝ որք էք ազգաւ Հայ. հաւատով քրիստոնէայ, կրօնիւք և գուանութեամբ Առաւօտըսական և սրբոյ Քրիստոսախօյի Աթուոյս Էջմիածնի

շնորհասուն և հոգեծին զաւակք. զի ոչ է մեզ մարտ և վէճ ընդ այլ ազգս քրիստոնէից՝ որք ի բնէ այլ են ի մէնջ ազգաւ և կրօնիւք. և ոչ գոյ թշնամութիւն ինչ նոցա առ մեզ՝ և կամ մեր առ նոսա. զի եղբարք են մեզ և սիրելիք. ըստ այնմ՝ որ քրիստոնէանք են: Այլ հակառակք մեր և թշնամիք՝ մեր ընտանիքն են. որք ի մէնջ ելեալք զմեզ խաճատեն: Նորա են որպէս զցեղք՝ որք ի հանդերձէ ելեալք՝ զնոյն հանդերձն ծակտեն: Եւ որպէս զորդն՝ որք ի փայտէ ելեալք՝ զնոյն փայտն մաշեն: Նորա են աղուեսունքն փորուք, որք զայգիս մեր ապականեն: Նորա են կարապետք նեւինն, որք արգէն իսկ եկեալք են: Որք առ ի մէնջ ելին, այլ ոչ էին ի մէնջ, զի եթէ ի մէնջ էին, ապա առ մեզ մնային, այլ գիտաջիբք, զի ոչ էին և ոչ են ի մէնջ: Քանզի են թէպէտ որիք ազամայ, սակայն կայէն՝ և կայինեանք են: Են թէպէտ նոյսծին զաւակք, բայց քամ են և քամայինք: Են թէպէտ աշակերտք Քրիստոսի, բայց յետոյ յուզա և յուզայեանք եղեն: Արեւմին խոտելիք են որպէս զկային՝ զքամ և ըզյուզայ. ասելիք են և հալածելիք որպէս ըզսողունս թուրեւորս և որպէս զխաբեբայ աղուեսունս գապականիչս կանոնաց և կարգաց սրբոյ եկեղեցոյս մերոյ: Նորա որք զմեզ և զեկեղեցիս մեր ուրացան՝ և զմեզ՝ հերձուածս և մտորեալս կարգան և գրեն՝ զանունն իւրեանց ի վերայ մեր գնելով, զի ոչ վայելէ մեզ զայնպիսի ուրացողսն իբրև զբարեկամ համարիլ և կամ ընդունիլ զապականեալ գրեանս նոցա: Վասն այսորիկ՝ աղաչեմ զձեզ զամենեսեանսդ, իմ սիրելի ազգդ Հայոց՝ ի սէրն Քրիստոսի և ստակալի չարչարանաց սրբոյն Քրիստոսի Առաւորչին մերոյ. խոտեցէք զնոսա իսպառ և ասեցէք, խորշեցարուք ի նոցանէ և հալածեցէք ի մէնջ որպէս մահաբեր թշնամի հոգեոց և մարմնոց ձերոց: Նոյնպէս զխաբէալի և զթուրեւոր գրեանս նոցին խոտեցէք և անհետ արարէք ի միջոյ ձերմէ, որք յարտաբուստ երեւին թէպէտ գեղեցիկք, սակայն ի ներքուստ լի են գարշահատութեամբ և նենգութեամբ՝ որպէս զմահաբեր գեղ մեղրապատեալ: Զի եթէ վասն հաւատոյ, գաւանութեան և աւանդութեան եկեղեցոյ են, ունիմք մեզ բաւական զայնպիսի գրեանս ի նախնեաց երջանկացն

մերոց: Աւստի ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի՝ ասեմ: Եթէ որ աւետարանեցէ ձեզ աւելի այլապէս քան զոր ունիք ի նախնեաց մերոց հորցն սրբոց, նզովեալ եղիցի: Քանզի՝ հաւատան մեր ոչ է հնացեալ՝ զի նորոգեցի. և ոչ է թերի՝ զի լրացի. այլ շնորհօքն Քրիստոսի ունիմք ի սրբոց Ղուսաւորչէն մերմէ. և ի նորին հաւաւելիացն զկատարեալ հաւատս՝ զուղիղ հաւանութիւն և զգեղեցիկ Աւանգումբիւնս սրբոց Եկեղեցւոյ. որ բաւական է մեզ ի փրկութիւն և ի կեանս յաւիտեանականս ամեն: Որ և վիպց և երաշխաւոր իսկ գնեմ՝ զիս առաջի Քրիստոսի և սրբոց Ղուսաւորչին մերոց ի հանդերձելումնս զի եթէ որ ըստ այս հաւատոյս և դաւանութեանս (զորս ունի Եկեղեցիո չայստանեացոյ) ունիցի նաև զգործս բարիս ըստ պատուիրանին Քրիստոսի՝ անկարծիք ժառանգելոց է ըզկեանս յաւիտեանականս. և քան զայս աւելին ի չարէն է:

Աւրեմն՝ հարկիւ և հարկիւ պատուիրեմ օրհնեալ և հարազատ Ղուսաւորչածին դաւակացո սրբոց Եջմիածնի. զի խոտիցէք իսպաւ և անհետ տունիցէք զթունալի գրեանս նոցին և զբանս որք վասն հաւատոյ՝ դաւանութեան՝ և եկեղեցական արարողութեան իցեն՝ որք յեկեղեցիս մեր վերաբերին. և կամ օտար և ներհակ իցեն աւանգումբեան և արարողութեան եկեղեցւոյս մերոց: Կիտաջիք զի եթէ որ ոչ պահեցէ զպատուէրս զայս ոչ եթէ միայն յինէն՝ և յիմապիտեաց չայրապետացն է նզովեալ. այլ ի սրբոց Ղուսաւորչէն մերմէ է նզովեալ. մանաւանդ՝ և զնա ունելոց է դատախազ ինքեան. որ զայնքան սոսկալի չարարանս նորին արհամարհեաց և զնա՝ և զնորին ուսուցեալ հաւատն ուրացաւ և ծակամուտ խարբայիցն և նոցին հաւատոցն հեռեւեցաւ: Իսկ եթէ այնպիսի գրեանք յառաջ դայցեն ի նոյունց՝ որք ընդգէմ հաւատոյ՝ դաւանութեան՝ և եկեղեցւոյս մերոց չունիցին զբանս, այլ ընդ աշխարհի գիտութեան իցեն՝ և աշխարհականաց պարապելիք. զայնպիսին (ներելով ասեմ) եթէ ստանայք ևս՝ իբրև դատարողաց գիրք համարեալ՝ որպէս զլրտես մտէք ի նոսա. զձեզ պիտանին աւանելով՝ զխոտանն ի բաց ընկեալիք:

Վասն Եկեղեցիացեալ Գործոցն զԿրօնականս և Կարծայ:

Արդ՝ Տօնքն այնորիկ որք յամենայնում՝ ամի տեղափոխին և շարժին ի տեղեաց իւրեանց ըստ բերմանց տարեգրացն, յայտնի է ամենից որոց միշտ ի միում տեղում տօնիցն անկարելի իսկ է: Վասն այնպիսեացն արարաք մանաւանդ զԵրկրորդ հատորն Տօնացուցիս ի վերայ ըզգորցն մերոց, որպէս զի իւրաքանչիւր տարեգիր զիւրոյ տարւոյ շարժական տօնան տեղաւորիցէ ի գիւրութիւն տօնուցացո որպէս ստացաք ի յառաջարանութեան: Իսկ ի յանշարժից տօնից ոմանց զորս մեք փոխեցաք ի տեղեաց իւրեանց, որպէս յիշեցաք ի յառաջարանութեան հանդերձ պատճառօքն, զորս վերայիշեմք ի ներքոյ. զայնտիկ ի տօնելն ձեր ի յեղեալ օրն ըստ նորոգ տօնացուցիս, ոմանց յարմարին նոյնոյ աւուր եղեալ գիրք և աւետարանն ի ճաշոցին զորս պարտիք ընթեռնուլ: Իսկ ոմանց որոց ոչ յարմարինս վասն այնոցիկ կարգեմք զլուծումն:

Հասարակ սրբոց և մարտիրոսաց՝ յորոց զմանա փոխեալ ի տեղեաց իւրեանց յայլում աւուր եղաք, որոց ոչ գոն յանուանէ և որոշեալ գիրք և աւետարանք ի յԱստուածաշունչին, ի յաւուր տօնի նոցա եթէ ձանձրաւիք ի գտանել զգիրք և զաւետարանս նոցա ի ճաշոցին, զգիրք և զաւետարան մի հասարակ տօնից մարտիրոսաց՝ օրն հանդիպիցի և առ ձեռն գայցէ ի մէջ ճաշոցին, զայնս ընթերցելիք անտարակոյս որ չէ ինչ անտեղի: Իսկ այնպիսեաց սրբոցն աւերափոխեցելոց որոց գոն յատուկ և յանուանէ գիրք և աւետարանք, յաւուրս տօնի նոցա ահա նշանադրեցաք զգիրք և զաւետարան իւրաքանչիւրոցն ըստ համագրոց ճաշոց գրքոցն, որոց ի պատահիլն ձեր ի մէջ տօնացուցիս գաղիք ի մէջ ճաշոցին զգիրք և զաւետարանն ըստ համագրոցն և ընթերցելիք:

Տեղափոխեցեալ Գործոցն:
 Ի մէջ Երկուսն Եւրոպայի և Վարդապետին:

Շարաթ, Կերտիսի հայրապետին և Խաթայ եպիսկոպոսին: (գիրս զգիրք և զաւետարանն ի ճաշոցին):
 Շարաթ, Տրդատայ թագաւորին: (գիրս ի

ճաշոցին զգիրք և զաւետարանն ի 521 հմրն):
 Երեքշարաթ, Գարարիայ մարգարէին: (գիրս ի ճաշոցին ի 526 համարն):

Ի մէջ Վարդապետին և Աստուածաշունչին:

Երկուշարաթ, Կիւրիանոսի եպիսկոպոսին և այլն: (զինի սորին երեքշարաթ օրն տես ի 564 համարն):

Երեքշարաթ, Աթանագինեայ եպիսկոպոսին և այլն: (ի միւս հինգշարաթ օրն տես ի ճաշոցին ի 565 համարն):

Հինգշարաթ, հախազարցն: (զինի սորին շարաթ օրն տես ի ճաշոցին ի 567 համարն):
 Շարաթ, Արգուոյ և Թուսանց Ղուսաւորչին (ի 577 համարն):

Երկուշարաթ, Մակարայեցւոցն: (ի միւս երկուշարաթ օրն տես ի ճաշոցին ի 575 հմրն):

Հինգշարաթ, Սոփիայ և այլն: (ի միւս երեքշարաթ օրն, տես ի ճաշոցին ի 581 համարն):

Ի մէջ Աստուածաշունչին և սրբոց Խաչին:

Հինգշարաթ, Երեմիայի մարգարէին: (ըզինի սորին շարաթ օրն տես ի ճաշոցին ի 604 համարն):

Շարաթ, Թովմայի Յակոբայ և Ծմաւօնի առաքելոցն: (ի միւս շարաթ օրն տես ի 606 համարն):

Եւ թէ Յակոբ և Ծմաւօն առաքելքն բաժանեալք ի միւս շարաթ օրն տօնիցին, ըզգիրք և զաւետարանն՝ սուրբ Յակոբայ պահոց երեքշարաթ աւուր կարգս ի 733 հմրն):

Երեքշարաթ, Մարգարէիցն Եգեկիէլի և այլն: Հինգշարաթ, Յովհաննու Կարապետին, մնաց ի միւս շարաթն տես ի ճաշոցին ի 975. և ի 980 համարն:

Գին Եւրոպայի և Եւրասիայի:

Շարաթ, Թարգմանչացն մերոց Մեսրոպայ և այլն: ի 662 համարն. գիրս զգիրք և զաւետարանն:

Շարաթ երկուստան վարդապետացն: (ըզգիրք և զաւետարանն ի մէջ Ապաներին զԱթանասին կարգս ի 87 համարն ի ճաշոցին):

Շարաթ, Յովհաննու սոկերերանին: (ի 106 համարն գիրս ի ճաշոցին):

Վերջին շարաթ օրն. Արգարու թագաւորին: (ի մէջ Ապաներին զԹէոդոսին կարգս զգիրք և զաւետարանն ի 82 համարն ի ճաշոցին):



կարգաւորութիւնն կէտեցոյն և Արարողութիւնն
ժամադրեցաւ: Եւ արեւն Ներսիսի Հայոց կախարհ-
չոյն: Որ եր քերէլ է սուրբ և է հարկաւոր: աս-
տանաբանն և հրեշտակաւորն սուրբ Հայոցն զեթ
սուրբն Մասեհեայ: Եւ ամենայն ամենայն համօր
համեալ և հասանելոյ: զպահասն էլից. և զսխա-
լանսն սուրբայ: Եւ կարգեայ ամենայն Հայաստա-
նայց կէտեցոյն անշրէլէ հաստատարն սուրբ:

Յառաջ քան զամենայնսն պարտ է յառ-
նել փակակալին և զամենայն ջահս և զկան-
թեղան լուցանել և խունի արկանել և հնչեցու-
ցանել զզանգակուն կամ զժամահարն երիցս
անգամ: Եւ յորժամ ժողովին ի ժամատունն
և ի դուռն եկեղեցւոյն, գայ եկեղեցւոյն
կամ սարկաւազն յատենն և երիցս երկրպա-
գէ: և ամենեքեան երկրպագեն ընդ նմա: Եւ
տայ զառաջին օրհնեայն յաւազ երիցու դասն,
կամ ի մեծագոյն առաջնորդն՝ ասելով, Օրհ-
նեա (այս անուն.) Եւ նա ասէ, Տէր եթէ զըր-
թունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհ-
նութիւնս քո. և կրկնէ: Եւ զարձեալ ասէ
սարկաւազն կամ փակակալն, օրհնեա (այս ա-
նուն.) Եւ նա որ զՏէր եթէ զըրթունսն սկսաւ,
ասէ, Օրհնեալ Համազոյ և միասնական անբա-
ժանելի սուրբ երրորդութիւն: Եւ ապա սար-
կաւազն կամ փակակալն գայ յատենն և ասէ
միայնակ: Տէր զի բազում եղեն նեղիչք իմ: Եւ
այլքն ձայնակցեալք նմին՝ ասեն ընդ նմա
զնոյն հանդերձ երկրպագութեամբ: Եւ եթէ
հանդիսաւոր օր լինի կամ կիւրակէ կամ գի-
շերային հսկումն, ի ձայն ասեն զՏէր զի բա-
զումն միաբան յատենն պարտեալ ի միոյ
կողմանէ եկեղեցւոյն մինչև ցմիւս կողմն: Եւ
ի վճարիլն փառս տայ աւագ երիցու կողման
դասակարն. և ասէ յատենն զմի տուն Յի-
շեսցուքին. և ապա մտանէ ի դասն: Եւ յոր-
ժամ վճարի երգն յերկու կողմանէ, զնան
սարկաւազունքն յատենն և ասեն զքարոզն
և զտէր ողորմեայն: Արթըն՝ աւագ երիցու
դասուն է: Եւ օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիս-
տոսն, մեծագունին է, կամ որ զարթունս
ասաց:

Առաջին կանոնին սկսանիլն թէ ի ձայն թէ
ի թիւ, և նորին քարոզն՝ աշակերտի դասուն
է և արթըն աւագ երիցուն է: Կանոնագլուխն
աւագ երիցու դասուն է. և օրհնութիւնն
աշակերտի դասուն է: Իսկ ի տօնից աւուրան,
թէ տէրունական լինի, և թէ հասարակաց
սրբոց, ով որ զերկրորդ կանոնն սկսաւ, նա
յորժամ կանոնն աւարտի, զկանոնագլուխն
յատենն սկսանի, և զկրկնակն՝ իւր դասա-
վարն ասէ: Օրհնութիւնն աշակերտի դասուն է:
Ի տէրունական տօնսն միաբան յատենն ե-
լանեն և ասեն զաւուր պատշաճ օրհնութիւնն:
Եւ յորժամ աւուր պատշաճն վճարի, ի դասն
մտանեն: Եւ աշակերտի դասն սկսանի զհե-
տեակ շարականն, և ասեն դասէ ի դաս. զի
դասէ ի դաս երգելն է հետեակ շարականն և
նչ միաբան ասելն: Չինի քարոզն որ ասի ի
ձայն, և տէր ողորմեայն՝ աւագ երիցու դա-
սուն է. և արթըն աւագ երիցուն է, զի ով
որ զայս արթնս ասէ, աւագ էրէցն նա է:

Իսկ ի կիւրակէի գիշերն՝ հետեոյք առա-
քելոց սուրբ հայրապետքն կարգեցին յերե-
քօրեայ մինչև ցառաւօտն հսկումն առնել,
և զուրթ կանոնագլուխն ի նոյնոյ ձայնէն, և
զտանս օրհնութիւնսն համաձայն տանս դա-
սուց հրեշտակաց ասել, որք միացին և կան
միշտ յօրհնութիւնս Աստուծոյ: Չորօրինակ որ
յամէն ձայնէ ուրթ կանոնի սաղմոսն գրեալ
կայ: Որոց մի ձայն շարական ասի ի միում
գիշերի և նչ ի յուրթ գիշերս: Չի իւրաքան-
չիւր շարական՝ հետ իւր նշանած սաղմո-
սին այնքան ասի մինչև սաղմոսն վճարի:
Այսպէս հարցն այնքան ասի սաղմոսովն, մին-
չև սաղմոսն վճարի: Այսպէս և ս մեծացու-
ցէն, ողորմեայն և տէր երկնիցն և ամենայն
շարականք հետ իւր սաղմոսին ասիլ պարտին
և նչ աւելի կամ պակաս: Իսկ ոմանք մինչ ա-
ւուր պատկերն նչ հանդիպի ի ձայնէն, ի վճա-
րիլ աւուր պատկերին՝ փոխեն զձայնն և ա-
ւուր ձայնիւն վարեն զշարականն, որպէս տօ-
նացոյցն ի տէրունական տօնսն ցուցանէ. թէ
զհետեակ շարականն ի ձայնէն ասա: Եւ այլք
հետ պատկերի աւուրն ասեն զպատշաճաւորն
ըստ տնօրինականացն: Իսկ ի պահոց աւուրն
թէ կանոնագլուխ ասես, յորժամ երկրորդ

կանոնին զվեց գուրդայն վճարես, անդէն
սկսիր զկանոնագլուխն. և երբ վճարի կանո-
նագլուխն, դարձեալ գան յատենն և ասեն
զյետին թողած գուրդայն նորա՝ որ զսաղմո-
սն երգեցին. և քարոզն՝ և տէր ողորմեայն
ի թիւ է: Գիրքն աւագ երիցու դասուն է՝ նո-
րա է՝ որ զքէն գոհանամքն ասաց: Յորժամ
սկսանին զարթնայն կամ զթագաւորքն,
նստի ընթերցողն ի յընթեռնուլ զգիրքն և
նայի որ չսխալի կարգացողն: Եւ զինի գրոցն
ասեն շարական յատենն. մի շարական ըստ
գրոցն, մի Աստուածածնի, և մի Խաչի: Մար-
թանքն հասարակաց է: Վասն խաչի քս պատ-
ուականին և քարոզն և սաղմոսն նոցա դա-
սուն է որ զգիրքն ընթերցան: Արթըն նորա
է որ զգիրքն ընթերցաւ. և զինի, Հայր մեր:

Երրորդ կանոնի սկսանիլն աւագ երիցուն
է. և քարոզն և արթըն աւագ երիցու դա-
սուն է: Որ զսաղմոսն սկսանի, զքարոզն նա
ասէ. և զարթըն յիւր դասն տայ. երբ վճա-
րի իւր դասն, ապա ի միւսն տայ զօրհնու-
թիւն և զխաւքն: Իսկ սաղմոսերգուքն զսաղ-
մոսն ասեն: Եւ ի վճարիլ գուրդային՝ այն որ
զգուրդայն սկսաւ, զխաւքն ասէ. և միւս ըն-
կերն ասէ՝ զայժմ և միշտ. և զամեն
թողու: Եւ սարկաւազն աւընթեր կալով
ասէ՝ և ևս խաղաղութեան զՏէր աղաչե-
ցուք: Դպիրն կեցն Տէր, ժողովուրդն՝ Տէր ո-
ղորմեա: Մարկաւազն ասէ, օրհնեա (այս ա-
նուն) և նա: ասէ, Օրհնութիւն և փառք հօր
և որդոյ և հոգւոյն սրբոյ այժմ՝. սարկա-
ւազն ասէ, օրհնեա: Արհի եպիսկոպոսն ասէ՝
Խաղաղութիւն ամենեցուն: Սաղմոսերգուն որ
զայժմ և միշտն ասաց՝ ասէ, Ամէն և ընդ
հոգւոյք քում: Եւ ապա սկսանի զսաղմոսն:

Չորրորդ կանոնի սկսանիլն և իւր քարոզն
և արթըն աշակերտի դասուն է: Հարցին
սաղմոսի սկսանիլն և իւր քարոզն և արթը-
քն աշակերտի դասուն է: Մեծացուցէի
սկսանիլն և իւր քարոզն և արթըն՝ աւագ
երիցու դասուն է: Չինի մեծացուցէին քա-
րոզ՝ Վասն սուրբ տեղոյս շինութեան՝ աշա-
կերտի դասուն է: Ողորմեային սկսանիլն և իւր
քարոզն և արթըն աւագ երիցու դասուն:
Դու ես թագաւորն՝ աւագ երիցուն է: Եղի-
ցի անուն Տեառն ձայնիւ՝ աւագ երիցու դա-

սուն է. և գայ յատենն: Եւ երբ փառք և
երկրպագութիւնն և Արի և մի մերժերն վճա-
րի մտանէ ի դասն: Չթագաւորեցէն աշա-
կերտի դասն ասէ՝ և գայ յատենն: Եւ
ի սկսանիլն զթագաւորեցէն, բանան զդուռն
եկեղեցւոյն. գայ աւագ երէցն ի դուրս ի ժա-
մատունն աւետարանն ի գիրկն հանդերձ ըս-
պասաւորքն և երկու յապտերօք և բուր-
վառաւ, և կանգնի յատենն: Եւ ի վճարի
երգոյն՝ աշակերտի դասն ասէ՝ որթի: Եւ ա-
ւագ երէցն խաչակնքէ աւետարանաւն ի վե-
րայ ժողովրդեանն և ասէ, Խաղաղութիւն ամ-
ենեցուն: Եւ միւս դասն ասէ, և ընդ հոգ-
ւոյք քում: Եւ սարկաւազն՝ Աստուծոյ եր-
կիր պագեսցուք: Եւ յորժամ ասեն՝ երկիւ-
րածութեամբ լուարուք, աւագ երէցն ասէ
Սրբոյ աւետարանիս որ ըստ Մատթէոսի, և
կամ որն որ լինի: Եւ ի յընթեռնուլն աւե-
տարանին, ամենեքեան ահիւ և գողութեամբ
լուիցեն. և նչ որ յենուցու ի դաս կամ
ի գաւազան: Եւ ի յընթեռնուլն ամենայն ա-
ւետարանայ՝ փառք քեզ Տէր Աստուած մեր,
Ոչ գաղարեցոյց և Չամենայն աւուրն՝ աշա-
կերտի դասն ասէ: Ի գիշերին աւագ երիցու
դասուն է: Աղուհայից կիւրակէիցն ի գիշե-
րի՝ զերրորդն ասա հանապաղ: Չուարձացեալք
քարոզն՝ աշակերտի դասուն է: Ի գիշերին
աւագ երիցու դասուն է: Արթըն աւագ ե-
րիցուն է: Աւետարանի համբուրեցն մեծին է
կամ աշակերտի դասուն է:

Չտէր յերկնիցն աշակերտի դասն սկսանի
ի բարձր: Մեծացուցէն և ողորմեայն՝ ցած
պիտի: Չփառք ի բարձունսն յատենն ասեն
միաբան: Եւ ի հանդիսի աւուրն ժամահա-
րաւ: Փառք պատիւ և երկրպագութիւնն ա-
շակերտի դասուն է:
Չյարութիւն Փրկչին և զառաւօտու երգն՝
յատենն սկսանիլն. և ասելն զառաջին անե-
րքն՝ աւագ երիցու դասուն է: Քարոզն և
գանձն աշակերտի դասուն է: Արթըն աւագ
երիցուն է: Մարթանքն հասարակաց է: Վա-
սն լսելի լինելոյն, Օրհնութիւն և փառքն
աւագ երիցու դասուն է: Թէ առաւօտու գիրք
լինի՝ սաղմոսն և գիրքն և արթըն աւագ
երիցու դասուն է: Աւետարանն աշակերտի
դասուն է: Թէ մեղեգի և տաղ լինի՝ ընդ
արարչականին աւագ երիցու դասուն է:

Նախ մեղեդի և տաղն ափս, և ապա արար-
չականն: Չկեցո՞ Տէրն՝ աւագ երիցու դասն
ասէ: Տէր ողորմեայն՝ աշակերտի դասն ասէ:
Եւ աղօթքն նմա է որ զաւետարանն ընթեր-
ցաւ: Անբիծքն և շարականն և սաղմոսն և
Հանգստեան աւետարանն և աղօթքն՝ աւագ
երիցու դասուն է: Իսկ ի կիրակէի երեկոյին
թէ գիրք լինի՝ սաղմոսն և գիրքն աշակեր-
տի դասուն է: Ալէլուան՝ աւագ երիցու դաս՝:
Աւետարանն՝ աւագ երիցուն է: Հանգստեան
շարականն՝ սաղմոսն և աւետարանն՝ աշա-
կերտի դասուն է: Խաչի շարականն՝ սաղմոսն՝
և խաչելութեան աւետարանն՝ աւագ երիցու
դասուն է:

Զթափօրի քարոզն այսպէս առ երեք տուն:
Եւ ևս խաղաղութեան. Վասն ի վերուստ խա-
ղաղութեան. Ողորմեայ մեզ Տէր: Պահպանի-
չքն և իւր աղօթքն՝ աւագ երիցու դասուն է:
Եւ զհանգստեանն և զխաչելութեան յայն
գլխոյն ընթերցար: Իսկ յայլ հասարակ ա-
ւուրսն՝ մանկունք, և զլինի մանկանցն աղօթ-
քն աւագ երիցու դասուն է:

Իսկ յաղուհացիցն՝ զՏէր ամենակալն նա
սկսանի որ զՍուրբ ես Տէրն ասաց: Մաղթանքն
և քարոզն նորա է որ զՏէր ամենակալն ըս-
կաւ: Աղօթքն՝ աւագ երիցուն է: Իսկ յաւագ
շարականն՝ զՍուրբ ես Տէրն ասա՛ և զլինի
զՏէր ամենակալն, և յեա տէր ամենակալին՝
զաւետարանի սաղմոսն և զաւետարանն, և
զլինի աւետարանին զԱրարչականն ասեն, և
մաղթանքն հասարակաց է: Աղօթքն նմա է,
որ երէկ զքէն գոհանամքն ասաց: Իսկ թէ
զլինի մանկանցն աւետարան ընթերցուն, ըզ-
Սուրբ ես Տէրն աւագ երէցն ասէ, որ զաւե-
տարանն ընթերցուն, զլինի Սուրբ ես տէրին՝
զսաղմոսն սկսանի աշակերտի դասն: Մաղ-
թանքն հասարակաց է, և զքարոզն նա ասէ,
որ զսուրբ ես Տէրն ասաց, աղօթքն նմա է որ
զքէն գոհանամքն ասաց:

Հայր մերն՝ աւագ երիցուն է:

Խրատ Արևագալին:

Իսկ արևագալի կղզի սաղմոսն թէ պա-
տուաւոր որ չլինի, աշակերտի դասուն է: Եւ
օրհնութիւն և փառքն և արևագալի կանոնի

սկսանիլն՝ աւագ երիցու դասուն է: Արևելից
շարականն և իւր տաղն և քարոզն աւագ
երիցու դասուն է: Աղօթքն՝ երեկօրեայ աւագ
երիցուն է: Աղագակեցէք սաղմոսի սկսանիլն
աւագ երիցու դասուն է, շարականն աւագ
երիցուն է: չգնաւորքին մաղթանքն հասա-
րակաց է: Քարոզն աւագ երիցու դասուն է:
Աղօթքն աւագ երիցուն է: Աստուած Աստ-
ուած իմ սաղմոսի սկսանիլն աշակերտի դա-
սուն է: Նոյնպէս և շարականն: Լոյս արարի-
չին մաղթանքն հասարակաց է: Քարոզն աշա-
կերտի դասուն է: Աղօթքն՝ անցեալ աւուր
աւագ երիցուն է: Տէր հովուեացէ սաղմոսին
սկսանիլն և շարականն չանսպարհ և իւր
տաղն՝ աւագ երիցու դասուն է: Մաղթանքն
հասարակաց է: Քարոզն և աղօթքն աւագ ե-
րիցու դասուն է, կամ վեհագունին: Իսկ
ի սրբոց օճան՝ յեաին աղօթք զԱւաջնորդ կե-
նացն ասա: Եւ ի պահոց աւուրան, Օրհնեալ
ես Տէր Աստուած փրկիչ: Հայր մեր որ յեր-
կինս և արձակելն՝ աւագ երիցու դասուն է:
Ի վճարելն մինչ զհայր մերն ասես՝ նախ ա-
սա՛ Օրհնեալ Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիս-
տոս, և ապա Հայր մեր:

Իսկ ճաշու աղօթից խրատ այն է:

Նախ երեք անգամ հարկանեն զգան-
գական միանգամայն և հարկանեն զփայտեայ
ժամահարն զլինի ըստ հնոյն: Եւ յորժամ ժո-
ղովին ի դուռն եղեկեցեայն՝ զայ փակակալն
կամ սարկաւազն յատեանն և երկիրագալե-
երիցս և ասէ՛ Օրհնեա Տէր, և աւագ երե-
ցն ասէ, Օրհնեալ հոգիդ սուրբ Աստուած
ճշմարիտ: զՈղորմեայն՝ փակակալն կամ սար-
կաւազն ասէ միայն յատեանն, և այլքն միա-
բան ձայնակցին սգէպ ծնրագրութեամբ: Եւ
յորժամ վճարի սորմեայն, յատեան ելանն
և զերգ սրբոյն Ներսիսի ամենեքեան միա-
բան ասեն, Օրհնեմք զքեզ: Եւ Յամենայն ժա-
մու աղաչանքն՝ աշակերտի դասուն է: Եւ օրհ-
նութիւն և փառքն աւագ երիցուն է:

Աւաջին կանոնի սկսանիլն՝ աշակերտի դա-
սուն է: Եւ պահոց մեծ քարոզն աւագ երի-
ցու դասուն է: Եւ աղօթքն և սաղմոսի սկը-
սանիլն աշակերտի դասուն է: Եւ օրհնու-
թիւն և փառքն նմա է, որ զմեծ աղօթքն ա-

սաց: Եւ փոքր քարոզն նմա է որ զսաղմոսն
սկսաւ, աղօթքն աւագ երիցուն է: Տէր հով-
ուեացէն նմա է որ զսաղմոսն սկսաւ: Աղօթքն
աշակերտի դասուն է:

Երկրորդ Ողորմեայի սկսանիլն նմա է որ
զխաղաղութեամբ քով հոգիդ ասաց: Իսկ օրհ-
նեալ հայր սուրբն աշակերտի դասուն է: Խա-
ւարեցաւ յատեանն ափս: Երկրորդ կանոնի
սկսանիլն աւագ երիցու դասուն է: Մեծ քա-
րոզն աշակերտի դասուն, աղօթքն աւագ ե-
րիցուն է: Սաղմոսի սկսանիլն և օրհնութիւն
և փառքն նմա է որ զմեծ աղօթքն ասաց:
Սաղմոսն և փոքր քարոզն աւագ երիցու դա-
սուն է: Աղօթքն՝ անցեալ աւուր աւագ երի-
ցուն է: Երանի որ խորհի սաղմոսն և քարո-
զն աշակերտի դասուն է, աղօթքն աւագ ե-
րիցուն է, այսպէս և Հայր գթածն:

Չերրորդ ողորմեայն աւագ երէցն ասէ, այլ
և Օրհնեալ որդիդ սուրբ Աստուած ճշմարի-
տն, և սղորմեա ինձ Աստուածն նորա է:
Չարչարակցեալն յատեանն ափս: Յամենայն
ժամու աղաչանքն՝ աշակերտի դասուն է: Օրհ-
նութիւն և փառքն աւագ երիցուն է:

Երրորդ կանոնի սկսանիլն անցեալ աւուր
աւագ երիցուն է: Եւ զայս կանոսն անցեալ
աւուր աւագ երիցունքն ասեն: Մեծ քարոզն
աւագ երիցու դասուն է: Եւ աղօթքն աշա-
կերտի դասուն է: Եւ սաղմոսի սկսանիլն նմա
է որ զմեծ աղօթքն ասաց: Եւ ևս խաղաղու-
թեան աւագ երիցուն է: Օրհնութիւն և փառ-
քն նմա է որ զմեծ աղօթքն ասաց: Փոքր քա-
րոզն աշակերտի դասուն է: Մաղթանքն հասա-
րակաց է: Քարոզն աւագ երիցու դասուն է:
Աղօթքն աշակերտի դասուն է: Չսաղմոսերգու-
թիւնն նմա է որ զՔրիստոս որդի Աստուծոյն
ասաց: Հայր մերն աւագ երիցու դասուն է:

Իսկ թէ պատարագ մտայի մտանէ աւագ
երէցն յեկեղեցին հանդերձ սարկաւազք և
գպրօք և զգետաւորի ի նոցանէ, նոյնպէս և
նորա ըստ իւրաքանչիւր պատշաճի, և լուցա-
նեն զպիքն մամեղէնս, և սարկաւազն բուր-
վաւով զայ ի ժամատունն, և ասէ աւագ ե-
րէցն, Լուսչից սրբութեամբ զձեռս իմ: Եւ
փան սրբուհոց Աստուածածնին: Եւ սարկա-
ւազն ասէ՛ Սուրբ զԱստուածածնին: Աւագ
երէցն ասէ, Բնկալ Տէր զաղաչանս, և Խոս-

տոյանիմ՝ աւաջի Աստուծոյ: Եւ արձակելն
աւագ երիցու դասուն է, և մտանեն յեկեղե-
ցին: Աղագակեցէքն՝ աշակերտի դասուն է, և
նորին քարոզն և աղօթքն աւագ երիցու դա-
սուն է: Խնկարկութեան շարականն՝ աւագ ե-
րիցու դասուն է: Ժամամուսն աշակերտի
դասուն է: Աեցո՛ տէրն, Տէր ողորմեայն, ա-
ւագ երիցու դասուն է, և գիրքն աշակերտի
դասուն է: Ի կիրակէի Նսային՝ աւագ երիցու
դասուն է: Մեծեղին և առաքեալն աշակեր-
տի դասուն է: Ար դառաքեալն ընթերցաւ, նա
սկսանի զալէլուիայն, և ապա զաստվարն աւ-
նու ի նմանէ և ասէ: Սաղմոսատունն աշա-
կերտի դասուն է: Չկնի ալէլուիային օրթի
աւագ երիցու դասուն է, կամ աւագ երի-
ցուն: Հաւատամքն եթէ ի ձայն, աւագ երի-
ցու դասուն է: Աեցո՛ Տէրն և յեաին տէր ո-
ղորմեայն՝ աշակերտի դասուն է: Սրբասացու-
թիւնն աւագ երիցու դասուն է:

Եւ թէ հանդիսաւոր օր լինի և զխորհուր-
դն վերաբերել կամիցիս, այս է արարողու-
թիւնն: Յորժամ գոչէ սարկաւազն, Մի որ
յերեխայից և զպիքն երգեն, Մարմին տէ-
րունական, քահանայ մի սարկաւազք և զըզ-
րօք երթայ և առնու զընծայն և սարկաւա-
զունքն աւաջի բուրխաօք, և զպիքն զլինի
լապտերօք և քշոցօք: Եւ յորժամ վճարի
Մարմին տէրունականն՝ սարկաւազն գոչէ
բարձր ձայնիւ: Ո՞րք զբրօթիցն, և առնու
ի նմանէ աւագ երիցու դասավարն և ասէ
զայս ի լման: Եւ գան յարևելից կողմն և
սարկաւազն ձայնէ բարձր: Չանսպարհ արա-
րէք այնմիկ ի լման, և ապա սկսանին զԵ-
կենդանարարն: Եւ երբ գան ի հարաւակողմն,
սարկաւազն ձայնէ բարձր, Աստուած ի հա-
րաւոյ եկեացէ, և ապա ասեն, Չամենայն ըզ-
կենդանարարն: Եւ գան յատեանն խորանին,
և Քահանայն որ ունի զընծայն ի ձեռն, ա-
սացէ բարձր ձայնիւ, Համբարձէք իշխանք
զգրուս, ի լման:

Իսկ եթէ եպիսկոպոս կամ պատուաւոր որ
է որ զպատարագն մատուցանէ, զայ բնգ ա-
ռաջ ինկարկէ և հարցանէ, Ո՞վ է սա թագա-
ւոր փառ: Եւ սկսանին, Որպէս զի զթագա-
ւորն ամենեցուն: Եւ երբ վճարի ասացէ
քահանայն, Համբարձէք իշխանք, ի լման: Եւ

որպէս զնա հարցանէ զնոյն. Ո՞վ է սա: Եւ սպա սկաննին Եւ զհրեշտակայն: Եւ երբ վրձարի դարձեալ ասէ քահանայն, Համբարձէք իշխանք. ի լման: Եւ եպիսկոպոսն հարցանէ, Ո՞վ է սա. և առնու զընծայն ի ձեռացն և հանէ ի սեղանն և երգեն զալէլուս: Եւ երբ վճարի սարկաւազն քարոզէ, Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Եւ ոմանք վերաբերեն զուրբ խորհուրդն ի սեղանն: Զկնի Տէր ողորմեային ասեն Որբ զքրոյբէիցն. և զխորհուրդն վերաբերեն ի սեղանն. և յետոյ ասէ սարկաւազն, Մի որ յերախայից. դպիրքն՝ Մարմին տէրունական: Եւ սարկաւազն ասէ, Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ: Եւ սպա զաւուր պատշաճ սրբասացութիւնն և զկնի, Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Եւ յորժամ վճարի պատարագն յայնմ տեղով ուր հաղորդին արժանաւորքն, Սարկաւազն առնու սկիհն և դառնայ ի ժողովուրդն և ասէ, Երկիւղիւ և հաւատով յառաջ մտախք և սրբ՝ Եւ ժողովուրդքն և ամենեքեան բանան զգլուխ և խոնարհին և ասեն, Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Եւ խաչակնքէ աւագ երէցն ի վերայ ժողովրդեանն և ասէ, Կեցն Տէր զժողովուրդքս քո և օրհնեալ զժառանգութիւնս քո. հովուեալ և բարձրացն զսոսա յայսմ հետէ մինչև յաւիտեան:

Խրատ էրեկոյեան աղօթից ժամապեղեաց:

Յառաջ լուցանէ փախտիւն զկանթեղան և խնկարկէ, և ապա հարկանէ զգանգական: Եւ յորժամ ժողովին ի դուռն եկեղեցւոյն, գայ փախտիւն կամ սարկաւազն յատեանն և երիցս երկրպագէ և ասէ օրհնեա Տէր կամ հայրապետ կամ փորձապետ: Եւ նա ասէ, Ես առ Աստուած կարգացի: Զխոնարհեցոն աւագ երիցու գասն սկսանի. նա և զՓառք քեզն և զօրհնութիւն և զխոսքն, աւագ երիցու գասն ասէ: Եւ ևս խաղաղութեան աշակերտի գասն: Զսպրեցան՝ աշակերտի գասն սկսանի: Եւ զուարթն և Տէրունական տօնից փառքն աշակերտի գասուն է: Ոմանք զլոյս զուարթն յատեանն ասեն. և

յայլ աւուրսն մաղթանքն հասարակաց է: Հասեալքս ի ժամ երեկոյի քարոզն և նորին աղօթքն աշակերտի գասուն է: Մեսեդի և ուղի եղիցին՝ աւագ երիցու գասուն է: Թէ ի ձայն ասես յատեանն ապա զառաջին տունսն: Քարոզն աշակերտի գասուն է: Մաղթանքն հասարակաց է. աղօթքն աւագ երիցուն է. օրհնութիւն և փառքն և համբարձին աւագ երիցու գասուն է: Համբարձին թէ երբ տուն է, երկու տուն սաղմոսովն երկու երկու ասա. թէ չորս տուն է՝ զառաջին տունն երկու անգամ ասա, և զմիջին երկու տունն ա. ա. ասա. և յետի տանն փառք ասա. թէ ե. տունն լինի համբարձին, զգ. տունն ա. ա. ասա. և յետի տանն փառք ասա. թէ վեց տուն լինի, զչորս տունն ա. ա. ասա. և յետի ք. տանն փառք ասա. զմինն մի գասն ասէ և զմիւսն միւս գասն: Զկնի համբարձեոյն քարոզ և աղօթքն սպրեցոյին՝ աշակերտի գասուն է: Սաղմոսի սկսանիլն աւագ երիցու գասուն է: Քարոզն և աղօթքն աշակերտի գասուն է: Իսկ ի կիրակնամուսուսն զԱստ օրհնեցէքն աշակերտի գասն սկսանի: Խնդրեսցուքն, կեցն Տէրն աւագ երիցու գասուն է. և Տէր ողորմեայն և աղօթքն աշակերտի գասուն է: Իսկ թէ շաբաթու օր եկեղեցւոյ տօն լինի, մեսեդի Աստ օրհնեցէք ասի. և զկնի Հայր գթածին զԱստ օրհնեցէք սաղմոսն մի ասեր, այլ Խնդրեսցուք, և Թագաւոր խաղաղութեան: Իսկ ի կիրակնամոսի երեկոյին ի կիրակի առաւօտուն զՍուրբ Աստուածն՝ միաբան յատեան ելանեն և ասեն, զկնի Հայր մեր որ յերկինքս: Զուէր Աստուած փրկութեան նա սկսանի որ զՅոյս կենացն ասաց: Իսկ ի կարգալ խնամի սկսանիլն աւագ երիցու գասուն է: Քարոզն և աղօթքն անցեալ աւուր աւագ երիցուն է: Տէր լոյս իմ սաղմոսի սկսանիլն աւագ երիցու գասուն է: Քարոզն և աղօթքն աշակերտի գասուն է: Զամբիծան յաշակերտի գասէն ասէ այն որ զՏէր բարերարն ասաց, Քարոզն և աղօթքն ևս աշակերտի գասուն է: Հայր մեր որ յերկինս և օրհնելն աւագ երիցու գասուն է:

Իսկ աղաչացիցն՝ զՏէր ամենակալն նա ըսկսանի որ զհայր գթածն ասաց: Եւ զայն մաղթանքն և քարոզն և աղօթքն աւագ երիցու գասուն է:

Իսկ Արարչու լինելն՝ Երեկոյի ժաման ըստ սրբայ հարցն Երեկոյեաց այս է:

Սախ ասէ աշակերտի գասուն պատուաւորն Սրհնեցից զՏէր յամենայն ժամ. և ըզփոխն ի լման ասեն միաբան. և զկնի Եւ ևս խաղաղութեան. և որ սկսաւ նա՝ ասէ օրհնութիւն և փառք: Եւ աւագ երիցու գասն սկսանի զի նեղութեան. և երբ վճարի կանոնն, որ սկսաւ զկանոնն՝ նա ասէ քարոզն վասն գասնեղոյ. և զօրհնութիւն և զփառքն յիւր գասն տայ: Այսպէս որ զկանոնն սկսաւ՝ սկսանի զսաղմոսն Աստուած մեր ապաւէն. և Աստուած յօգնել ինձ նայեաց. և զկնի՝ միաբան ասեն, վասն սրբուհւոյ Աստուածածնին: Եւ որ զսաղմոսի փոխն սկսաւ՝ ասէ քարոզն Սուրբ զԱստուածածնին. և զաղօթան յիւր գասն տայ: Աշակերտի գասն սկսանի զամբիծան. և լրապէս ասեն զերեք գուրայսն:

Եւ զկնի զՀոգւոյ հանգուցելոյն միաբան ասեն: Եւ որ զամբիծան սկսաւ՝ ասէ զքարոզն և ևս խաղաղութեան. փասն հոգւոյն հանգուցելոյ. և զաղօթան յիւր գասն տայ: Եւ ով որ զՔրիստոս սրբին ասաց, նա սկսանի Ես առ Աստուած կարգացի: Խոնարհեցոն աւագ երիցու գասուն է: Իսկ զԱպրեցոն աշակերտի գասն սկսանի: Հասեալքս ի ժամ երեկոյիս քարոզն և աղօթքն աշակերտի գասուն է: Եւ այլն ամենայն ասացաւ յառաջագոյն: Իսկ յաւագ ուրբաթու գիշերն կցորդ սաղմոսին աւագ երիցու գասուն է. Եւ խոնարհ ժողովեցան ի միասին: Եւ այլն և շարականն Այս անձառ է: Առաջին աւետարանն աւագ երիցու գասուն է: Իսկ ճաշու առաջին սաղմոսն և առաջին գիրքն՝ աշակերտի գասուն է. Աւետարանն աւագ երիցու գասուն է. և որ գասն որ զաւետարանն ընթեռնու, զհետագայ գիրքն այն գասն ընթեռնու. և զկնի զաւետարանն միւս գասն ընթեռնու և զհետակայ գրեանսն. որ յետի աւետարանն յաւագ երիցու գասն տայ: Իսկ յորժամ յայտնութիւն յառաջաւորն մտանէ, ի ճաշու ժամն մինչ զողորմեայն և զսաղմոսն և զաղօթան ասես, ի վճարիլ սաղմոսերգութեան՝ ասա և զժամամուսն և զճաշու շարականն և զուրբ Աստուածն և զվասն խաղաղութեան և զօրհնութիւն և փառքն: Աստ ասի Տէր Աստուած փրկութեան և ի կարգալ խնամն և Շնորհեալ մեզ Տէրն. և այլն: Եւ յորժամ ասես զՏէր լոյս իմն, զաւուր գիրքն և զԱւետարանն ընթեռնու և այլն նոյնոյ կարգի է: Իսկ մինչ Տեառնընդառաջն յաղուհացւոն մտանէ, յորժամ ճաշու զողորմեայն և զաղօթան ասեն, զկնի ասեղոյ ըզսաղմոսերգութիւնս, զՏէր Աստուած փրկութեան ասա. և զճնորհեալ մեզ Տէրն և զայլն: Եւ յորժամ ասես զՏէր լոյսն, զաւուր գիրքն ընթեռնու և զկնի գրեանցն Աղաչեսցուք, Շնորհատու բարեաց:

Իսկ թէ զերեք ողորմեայն ի միում ժամու ոչ ասես, այլ յերիս ժամս ըստ անապատաւոր հարցն սրբոյ որ ի մաքենիսն և ի թեզնիսն էին՝ այսինքն Յերրորդ ժամն, ի վեցերորդ ժամն ի յիններորդ ժամն, Այսպէս է սրարողութիւնն:

Ի յերրորդ ժամն մի անգամ հարկանեն զգանգակն: Եւ ժողովին ի դուռն եկեղեցւոյն և ասեն զողորմեայն. շարական, Սրհնեմք ըզքեզ: Զկնի սաղմոսին՝ որ կանոն որ լինի: Քարոզ՝ Միաբան ամենեքեան և իւր աղօթքն: Սաղմոս՝ Տէր Աստուած օրհնեալ: Աստուած մեր Աստուած կենարար: Շարական խաչի և հոգւոյ գալստեան յորձայնի որ լինիս: Քարոզ՝ Խնդրեսցուք առաջնորդեալ. և այլն ըստ կարգի սաղմոս, քարոզ և աղօթք:

Ի վեցերորդ ժամն հարկանեն զգանգակն կրկին անգամ և ժողովին ի դուռն եկեղեցւոյն. և ասեն զողորմեայն: Շարական, Խաւարեցաւ: Սաղմոս Կեցն, գուրայն ի լման: Քարոզ՝ Արթուր մտօք և իւր աղօթքն: Երկրորդ սաղմոս՝ Տէր մի սրամտութեամբ, Ողորմեա ինձ Տէր զի հիւանդ էմ ես. այլ սաղմոս Ես ասացի ի վերանալ յինէն: Շարական, Յոյս և յարութիւն ազգի. և սպաշխարութեան Հայր բազումողորմ. յոր ձայնի և լինիս անտի ասա: Քարոզ՝ վասն հիւանդաց. աղօթք՝ փարատեալ. և այլն: Յիններորդ ժամն հարկանեն զգանգակն երիցս անգամ. և ժողովին ի դուռն եկեղեցւոյն. և ասեն զողորմեայն: Շարական Չարչարակեալ: Սաղմոս, Սրհնեցից զՏէր յամենայն ժամ. և շարական Աստուածածնի. և սաղմոս Աստուած մեր ապաւէն:

և Աստուած յօգնել ինձ նայեաց: Քարոզ Սուրբ զԱստուածածինն: Աղօթք ընկալ Տէր, եւ զԱմբիճսն ի լման ասեն: Քարոզ, Աղաչեսցուք զկենսատու: Աղօթք՝ Անկեալ սուաջի քոյ: Սաղմոս: Սիրեցի, եւ զինի շարական խաչի եւ հանգստեան՝ յոր ձայնի որ լինիս: Մաղթանք Հոգւոցն: Քարոզ, Վասն հանգու: Աղօթք՝ Քրիստոս որդի: Ի մեռասաներորդ ժամուն ասեն եւ առ Աստուած կարգացի, եւ այլն ըստ կարգի: Ի կատարումն ամենայնի Աստուած օրհնեալ եղիցի յաւիտեանս յաւիտենից Ամէն:

Խրատ: յաղագո Պաշտօնանց եկեղեցեաց Հայաստանաց: Արարեալ է սուրբ Հարրապետէն Թովմայէ Մեծաբէցաց ի պայծառութեան կարգաց եկեղեցաց:

Ի գիշերի զինի Տէր եթէ զըթունսին երգ տեսուն Ներսիսի: Յիշեսցուք. Զարթիք. Զարթիք ընդէր ննջես. եւ Անբաժանելի: Քարոզ Զարթուցեալքս: Զինի՝ Աւաւաւ լուսոյ: Աղօթք՝ Զքէն գոհանամք Տէր Աստուած մեր:

Եւ ապա շարական հանգստեան: Թէ աճ. կամ գճ. լինի ձայնն) Ար ստեղծմամբ. Քեզ վայելէ. Զայն արկեալ. Զհոգիս ծառայից. Ար անճառ: Հայր բարեգութ: Զապաշխարութեան ողորմեայն լիապէս ասա. եւ մի շարական ըստ պատշաճին. եւ ապա Հոգւոյ գալստեան՝ Աստուածածնի եւ խաչի. Փառք. արէրուից. Սաղմոս ի ձայնէն: Աւետարան Յովհաննու ճժը. Ամէն ամէն ասեմ՝ ձեզ՝ ոչ է ծառայ մեծ. քան զպէր իւր. 13 գլ. 16 համար ք. եւ աշակերտքն իւր. 18 գլ. Զինի երգ

Ռահ գործեալ. մաղթանք: Հոգւոցն հանգուցելոց: Քարոզ, Վասն հանգուցելոց. աղօթք, Քրիստոս որդի: Հայր մեր:

Իսկ թէ ալ. կամ գլ. լինի շարական հանգստեան ըստ առաջին խրատուն: Աւետարան Ղուկասու ճիւղ: եւ յասել ոմանց. 21 գլ. 5 համար, ք. լսել ի նմանէ. 38 համար: Իսկ թէ բճ. կամ գճ. լինի շարական հանգստեան ըստ առաջին խրատուն Աւետարան Մարկոսի՝ ճէ: եւ յեղանելն նորա. 13 գլ. ք. ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք 37 համար:

Իսկ եթէ բլ. կամ գլ. լինի շարական հանգստեան ըստ առաջին խրատուն: Աւետարան Մատթէոսի՝ միւր: եւ ելեալ արտաքս. 24 գլ. ք. ի խաչ ելանել. 26 գլ. 2 համար:

(Այս վասն հասարակ կերպով էլ):

Իսկ յաղուհացի կիւրակէան՝ եւ ի խաչի տօնսն՝ Այսօր անճառ ասա: Սաղմոս դ. Նշանեցաւ առ մեզ, փոխ: Ի կարգալ իմում: Աւետարան խաչելութեան ի ձայնէն. զինի երգ՝ Նորոգոց:

Իսկ ի մարտիրոսաց տօնին՝ Աշխարհ ամենայն շարական հանգստեան ի ձայնէն: Աւետարան հանգստեան ի ձայնէն. զինի երգ Աստուած անեղ ըստ ձայնին. մաղթանք: Հոգւոցն հանգուցելոց: Վասն հանգուցեալ: Քրիստոս որդի:

Հայր մեր որ յերկինս է:



27 8 1/2

<< Ազգային գրադարան >>

 NL0027628

0027628

27 8 1/2

<< Ազգային գրադարան >>

 NL0027627

0027627

27 8 1/2

<< Ազգային գրադարան >>

 NL0027629

0027629

27 8 1/2

<< Ազգային գրադարան >>

 NL0027626

0027626

